ՌՈԶԱ ԽԱՐԱԶՅԱՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀՆԱՐՆԵՐ

Հայտնի է, որ նախքան դպրոց գնալը երեխան ունի որոշակի բառապաշար, որով նա կարողանում է հաղորդակցվել հասակակիցների և մեծերի հետ, արտահայտել իր մտքերը շրջապատող իրականության մասին: Իր ունեցած բառային ողջ պաշարը նա օգտագործում է բանավոր խոսքում, այսինքն նրա այս բառապաշարը թեև աղքատ, բայց ակտիվ (գործուն) է, և նրա իմացած շատ քիչ բառեր են, որ չեն օգտագործվում իր կենդանի խոսքում: Այլ կերպ ասած նախադպրոցական տարիքում երեխան պասիվ (ոչ գործուն) բառապաշար գրեթե չունի, իսկ եթե ունի էլ, ապա այն աննշան է:

Դպրոցական նոր միջավայրում երեխան ամեն օր նոր գիտելիքներ է ձեռք բերում, ընդարձակվում են նրա պատկերացումները շրջապատի վերաբերյալ, որի հետևանքով խիստ ընդարձակվում է նրա պասիվ բառապաշարը: Պասիվ բառապաշարի հարստացումն աննպատակ կլինի, եթե այն որպես այդպիսին էլ մնա և անհրաժեշտ աշխատանք չտարվի երեխայի սեփականությունը դարձնելու ուղղությամբ: Ուստի տարրական դասարանների ուսուցիչների հիմնական խնդիրներից մեկն էլ աշակերտի պասիվ բառապաշարն ակտիվի վերածելն է: Բառապաշարի ակտիվացումը ուսուցված կամ զանազան ճանապարհներով աշակերտների ձեռք բերած նոր բառերի ու արտահայտությունների օգտագործումն է սեփական խոսքում, որն ամեն մի ուսուցման հիմնական ու վերջնական նպատակն է: Բացատրված կամ մատուցված բառը պետք է տարբեր ձևերով գործադրման մեջ դրվի, որպեսզի հաստատապես հասնի աշակերտներին, յուրացվի նրանց կողմից: Դրա համար գործադրելի ենք համարում ուսուցված բառերը հաճախակի կրկնելը կամ վերհիշելը, այդ բառերի շուրջ բառակազմական, հոմանիշների ու հականիշների որոնման, ուղղագրական կամ քերականական դասդասումների վարժություններ կատարելը, բառացանկեր կազմելը և այլն:

Սակայն ամենից ավելի գոհացուցիչ արդյունքներ է տալիս արդեն

յուրացված բառերի օգտագործումը բառակապակցությունների, նախադասությունների ու կապակցված բնագրերի մեջ, որն ապահովում է ոչ միայն բառի լիակատար սեփականումը, այլև աշխատանքի աստիճանական բարդացումն ու հաջորդականությունը:

Ժամանակակից մանկավարժական հոգեբանությունն առաջադրում է հասկացությունների փուլերով ձևավորման կամ յուրացման աստիճանականության սկզբունքը, որն այս հարցում լիովին արդարացնում է իրեն և նպաստավոր պայմաններ ստեղծում նոր բառերի ու հասկացությունների ճիշտ յուրացման համար:

Նորածանոթ բառերը խոսքի մեջ կիրառելուն մեծապես օգնում են բառակապակցությունները, որոնք նախադասությանն ու խոսքին անցնելու միջին օղակ են, խոսք կառուցելու ուսուցման գործում շատ կարևոր ու անփոխարինելի միջոց:

Բառակապակցությունների շուրջ տարվող առաջադրանքները տարրական դասարանների ընթերցարաններում երեք տիպի են.

1. Տրված են բառակապակցությունները, պահանջվում է դրանք օգտագործել նախադասությունների մեջ: Այս աշխատանքը երեխաները կատարում են առանց դժվարության:

2. Առաջադրանքների մյուս խումբը վերաբերում է բառակապակցություններ կազմելուն. բառակապակցություններ, որտեղ գլխավոր բառն առարկա է ցույց տալիս, և նրա հետ պետք է կապակցել հատկանիշ կամ գործողություն ցույց տվող բառեր:

3. Առաջադրանքների երրորդ խումբն աշխատանքի ավելի բարդ ձև է. պահանջում է բնագրից դուրս գրել դուր եկած բառակապակցությունները և դրանք օգտագործել նախադասությունների կամ կապակցված բնագրերի մեջ: Այս աշխատանքը տրված է մի քանի տարբերակով, որոնք բոլորն էլ աշակերտից ինքնուրույնություն են պահանջում, մղում ստեղծագործական ակտիվ աշխատանքի:

Բառապաշարի ակտիվացմանն ամենից ավելի նպաստում է բառը կամ բառակապակցությունը նախադասության մեջ գործածելու աշխատանքը:

Շահեկան ենք համարումնոր սովորած բառերը լեզվական վարժությունների, գրավոր աշխատանքների և այլ բնագրերում օգտագործելը,

որպեսզի աշակերտները որքան հնարավոր է ավելի շատ, ավելի հաճախ հանդիպեն այդ բառերին, տեսնեն, լսեն, գործածեն դրանք՝ ակտիվացնելով իրենց պասիվ բառապաշարը:

Բառապաշարի ակտիվացման ուղղությամբ տարվող աշխատանքների համակարգում իր ուրույն տեղն ունի բառի օգտագործումը կապակցված խոսքում, քանի որ և՛ բառապաշարի հարստացումն ու քերականության ուսուցումը, և՛ խոսք կառուցելու կարողության ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքներն իրենց փոխկապակցումը գտնում են կապակցված խոսքի մեջ: Կապակցված ինքնուրույն խոսք կառուցելու ուղղությամբ տարվելիք աշխատանքների համակարգում ամենապարզ ու մատչելի առաջադրանքը. տեսածի, լսածի ու զգացածի մասին պատմելն է, որը կարող ենք գործադրել դպրոցական կյանքի առաջին իսկ օրից, ուսուցչի պատմածի վերարտադրումը նույնպես նպաստում է աշակերտների մոտ կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորմանը և բառապաշարի ակտիվացմանը: Լսելով ուսուցչի կուռ ու ամբողջական, արտահայտիչ խոսքը՝ երեխաներն ընդօրինակում են այն և առանց զգալի ջանքերի վերարտադրում:

Դասարանում մշակված նյութի բովանդակության վերարտադրումը:

Բնագրի լեզուն յուրացվում է նրա ընթերցման, զրույցի, բառային աշխատանքի ժամանակ, սակայն այն դառնում է աշակերտի սեփականությունը, մտնում ակտիվ բառապաշարի մեջ հիմնականում բովանդակության վերարտադրման ընթացքում: Այն իր անփոխարինելի տեղն ունի նաև կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորման աշխատանքների համակարգում:

Կարդացած նյութը ինքնուրույն պատմելու համար անհրաժեշտ է.

ա) կատարել ընտրովի ընթերցանություն՝ ստեղծագործության ենթատեքստի և բովանդակության տարբեր շերտերի բացահայտման համար.

բ) վերլուծել հերոսների արարքը, նրանց կատարած գործողությունները, տալ դրանց գնահատականը, ստեղծել պատճառահետևանքային կապեր.

գ) որոշել այն գլխավորը, առանց որի մասին խոսելու պատմվածքը կկորցնի իր միտքը.

դ) կազմակերպել նպատակային բառային աշխատանք՝ անհրաժեշտ բառապաշար «հավաքելու» համար.

ե) խթանել դատողություններով ու պատճառահետևանքային կապերով պատմելը:

Որպես ականատես կամ մասնակից պատմելու առաջադրանքները սովորողներին մղում են խոսել մտածելով, դատելով, կապ են ստեղծում երեխայի կենսափորձի, խոսքային արդեն ձևավորված կաղապարների հետ: Եթե բնագիրը լավ ծանոթ է երեխային, նա չի լարվում, ճգնում հիշել բնագրի այս կամ այն բառը կամ նախադասությունը, այլ ինքնուրույն փնտրում գտնում է անհրաժեշտ բառեր ու արտահայտություններ իր պասիվ բառապաշարից: Դրանով է բացատրվում պատմելու ժամանակ մի բառի փոխարինումը մյուսով: Պարզվում է, որ երեխաներն ամենից առաջ փոխում են այն բառերը, որոնք քիչ գործածական են, քիչ ծանոթ իրենց: Անհամեմատ դժվար է համառոտելով պատմելը, քանի որ երեխան ստիպված է կրճատումներ անել, զատել գլխավորը երկրորդականից, խոսքը դարձնել ավելի կուռ ու հակիրճ: Այս դեպքում նա ավելի շատ է ստիպված լինում դիմել իր պասիվ բառապաշարին, ավելի շատ բառեր ու արտահայտություններ է փոխում, կառուցում իր սեփական խոսքը, որը և նպաստավոր պայմաններ է ստեղծում բառապաշարի ակտիվացման համար:

Փոփոխելով ու ստեղծագործելով պատմելը նույնպես նպաստում է բառապաշարի ակտիվացմանը, երբ երեխաները դասարանում մշակվող նյութին սկիզբ կամ վերջ են ստեղծում, շարունակում պատմվածքը կամ հեքիաթը, նմանությամբ հորինում հեքիաթներ ու պատմվածքներ: Կիրառելի են նաև պատմվածքը մասերի բաժանելու, վերնագրելու, ըստ այդ վերնագրերի հաջորդականության պատմելու, պատմվածքում նկարագրված դեպքերի և իրենց հետ կատարված նման դեպքերի միջև համեմատություններ անցկացնելու և այլ հանձնարարականներն ու առաջադրանքները:

Բանավոր ու գրավոր փոխադրություններն ու շարադրությունները ևս օգտակար են բառապաշարի ակտիվացման համար:

Այսպիսով, տարրական դասարանների աշակերտների պասիվ բառապաշարի ակտիվացումը խիստ բազմաբնույթ ու համակողմանի աշխատանք է պահանջում, որն իր մեջ ընդգրկում է լեզվի ուսուցման գրեթե բոլոր բնագավառները: